

կան ձնշողութեան ցածանալը պիտի որ դետնի օդի հոսանքը գետնից վեր բնակարաններում աւելացնէ, և ծշմարիտ որ մի քանի բժիշկների հետազոտութիւններից երեսցաւ որ տիֆային և խօլերային համաճարակմունքը ուղեկից են եղել ծանրաչափի սաստիկ ցածանալուն և մինչեւ անգամ համաճարակման զօրութեան փոփոխութիւնը մեծաւ մասամբ ուղեկցել է ծանրաչափական ձնշողութեան փոփոխութեանը:

Ինչ որ կվերաբերվի անհատի տրամադրութեան գէպի միազմատիկա-  
կան հիւանդութիւնները նկատված է որ տիֆով հիւանդանալու տրամա-  
դրութիւնը աւելի մեծ է 15—20 տարեկան հասակում, տիֆը մեծաւ մա-  
սամբ հարուածում է առողջ և պնդակազմ անհատներին, իսկ խօլերան  
թշլ և նուազ մարդիկներին, 8եղը կարծես թէ առանց ազգեցութեան չէ  
մոռւմ. Իրիդէնի 20 տարվան տեղեկապրական աղիւսակներից երեսում է  
որ Հնդկաստանում խօլերայից մեռել են հազար եվրոպացիներից 54 հոգի,  
իսկ տեղական ժողովրդից 4. այսինքն եվրոպացիներ մօտ 13 անդամ աւելի  
են վեասվում քան թէ տեղական բնակիչները. Տեղական բնակիչներից  
Սիպանները աւելի քիչ են տրամադրված վարակման, քան թէ միւս բնա-  
կիչները — Հօրկասները, որոնք չնայելով որ միւնոյն պայմանների մէջ են  
գտնվում, ինչպէս և Սիպանները. Նկատված է որ Նեզրերը գեղին տեն-  
դով համարեա բոլորովին չեն վարակվում, և նոցա տրամադրութիւնը  
գէպի այդ հիւանդութիւնը աւելանում է միայն այն ժամանակ, երբ նոքա  
բարեխառն երկիրներում երկար մնալուց յետոյ վերադառնում են իւրեանց  
հայրենիքը:

q. s. q.

ԳՈՒԱՏՏԵԿԱՐԵՎ,

ՏՊԱԳ-ԲՈՒԺԵԱՆԻ ՀԱՐՅՈՒ

u.

Մարդկութեան բարերարների եւ մեծագործ անձների վերայ ոբբան շատ զրկի  
եւ խօսվի, երբէք մանմրավի չէ, այլ առաւել եւս զգացմանը կշարժէ: Այս մտքով  
յօժարութեամբ կնրատարակենք Գուատահներպի կենսապրաւթիւնը, որ երբէք  
չէ կարօղ մնանալ, այլ բանի որ կղարդանայ մարդկութեան քաղաքակրթութիւնն,  
այնքան մարդկութեան այսպիսի բարերարներն արժէք կատանան:

Յովինան Գուշտէնքը ծնվեցաւ 1400 թ. Մայնց աղաս եւ հարուստ քաղաքի մէջ Ըլինի ափին Գերմանիայում։ Կա հին աղնուական ցեղից էր։

Մայնց, Ստրագրուրդ, Վօրմս եւ ուրիշ ինքնավարչական քաղաքները, Գերմանիայի ծայրագոյն իշխանութեան տակ գտնվելով, կկառավարվէին ինքն լստ ինքնեան ինչպէս փոքրիկ հասարակապետութիւններ: Նոյա ժողովուրդը բաղկացած էր պատերազմասէր աղնուականներից, քաղաքացիներից և աշխատասէր հաւարակ ժողովրդից:

Աղնուականների եւ քաղաքացիների մէջ յաճախ վէճեր կրացվէին իշխանութեան համար, իսկ ժողովուրդը կմիանար կամ այս կամ այն կողմին, որոնք փոփոխաբար կամ նորա սիրառ կառնէին կամ կճնշէին: Այս վէճերը, որոնք կծագէին այս կամ այն մարդի անմնական օգտի կամ մնափառութեան համար, յաճախ կփոխվէին ներքին պատերազմների, որոնց մէջ յաղթութիւնը կմնար կամ աղնուականներին կամ քաղաքացիներին եւ կամ ժողովրդին, եւ հետեւաբար այս քաղաքների ժողովուրդը միշտ երկու կրածանվէր, յաղթողներ եւ յաղթվածներ:

## Բ.

Կար մայրինի Մայնց քաղաքի վէճերի մէջ երիտասարդ Գուտտենբէրդը, վնելով րուն ազնուական, բնականաբար կպատերազմէր այն ընկերութեան համար, որին կպատկանէին ինքն, իր հայրը եւ իւր պապը: Այս անդամ յաղթութիւնը չմնաց ազնուականներին եւ Գուտտենբէրդը իւրայիններով արտորվեցաւ Մայնցից: Նորամայրը եւ քոյթերը միայն մնացին իւրեանց առւնը եւ կալուածք կառավարելու նոցա մեղաւոր չէին համարած:

Գուտտենբէրդի այս առաջին արտորումն երկարատև չէր. վիճող դասելը խաղաղացան եւ արտորվածները վերադարձան: Բայց շուտով 1420ին մինի զրդամամբ Քօթերա թագաւորի Մայնց հանդէսով զօրքով մուտք զործելու ժամին առաջ դնալու իրաւունքի համար եղած կոռից նոր խռովութիւն ծագեց եւ 49 արեկան Գուտտենբէրդը այս երկրորդ անգամ արտորվեցաւ հայրենիրից: Այս անդամ Ֆրանկֆուրտ ազնուականները վիշամուխ եղաւ եւ խաղաղացրեց վիճող կողմերը: Արտորված ազնուականները նորին դարձան արտորից այն պայմանով, որ հաւասար իրաւունք ունենան քաղաքացիների հետ քաղաքացին վարչութեան դործերի վերաբերմամբ: Բայց Գուտտենբէրդը — նորանից էր արդեօք որ նա իւր քաջութեամբ ուրիշներից աւելի գարհուրելի էր քաղաքացիների համար եւ ինքն սակաւ կհամակրէր նոցա, կամ նորանից էր ալ զեօք, որ մայրական կանոնի հետ ծծած հպարտութիւնը կարդեէր նորան խոնարհել պլէքէ յների (հասարակ ժողովրդին) ճնշման տակ, կամ թէ նորանից էր արդեօք — եւ սա առաւել հաւանական է — որ նորա 40ամեայ ներկայութիւնը Սուրագրուրդի մէջ զիտութիւններ սովորելու համար զարծրած էր նորա ուշադրութիւնը աւելի բարձր նպատակներին, քան թէ որեւէից սնուախ պատիւներ հասարակապետութեան մէջ, Գուտտենբէրդը հրաժարվեցաւ հայրենիրը վերադառնարուց: Նորամայրը, որ Մայնցից չէր դադարում նորա մասին հոգալուց, խնդրեց հասարակապետութեանից որ իւր որդոն իրաւունք տան ստանալու գննէ փոքրիկ մի մասն այն իւր կալուածներից, որը զրաւած էր հասարակապետութիւնը: Հասարակապետութիւնը պատասխանեց, որ ազնուական Գուտտենբէրդը իւր հրաժարվելովը հայրենիր վերադառնարուց հրատարակեց իւրեան հայրենիրի թշնամի, իսկ Թշնամիներին հասարակապետութիւնն ոչինչ ոռնիկ չի տայ: Գուտտենբէրդը, որը իւր յամառ հպարտութեամբ կամաւոր արտորման զառապալտած էր իւրեան, հարկադրվեցաւ ասրել այն փոքրի միայն, որը կուղարկեր նորան ծածուկ իւր մայրը: Ասրամբորդի մէջ նա իւր բնաւորութեամբ եւ իւր զիտական տեղեկութիւնների համար զրաւեց ընդհանուր յարգանը եւ սէրը

այնպէս որ երբ Մայնցիր վայցութեան նախագահը մի անդամ պիտի անցնէր այս բաղարով, գուտտէնքէրգի կողմնակիցները բռնեցին նորան եւ բանտ դրին եւ չարձակեցին, մինչեւ որ Մայնց քաղաքի գրաւոր համաժայռութիւն չստացան գուտտէնքէրգին իւր հայրենական ժառանգութիւնը վերադարձնելու:

## Գ.

Նորէն տէր զառնալով իւր եկամուաներին Գուտտէնքէրգը յանձնեցաւ իւր դրականական կրօնական եւ արհեստագիտական ծգումունքին: Նա սկսեց ճանապարհորդել քաղաքից քաղաք, ուսումնասիրելով իւրաքանչիւրի նշանաւոր բաները եւ այցելելով ամենայն տեսակ մարդիկներին, որոնք որեւիցէ կերպով անուն ստացած էին զիտութիւնների եւ զեղարուեսանների, մինչեւ անդամ արուեսանների ասպարէզում: Արուեստաւորներն այն ժամանակ գերմանիայում կանգնած էին հաւասար աստիճանի վերայ նկարիչների հետ: Այս մի ժամանակակէտ էր, ուր նոր հնարկած արուեստները զեղարհեստի նշանակութիւն ունէին եւ արուեստանոցների առաջին դործվածները հրաշը էին կարծվում: Գուտտէնքէրգը հճանապարհորդէր միայնակ, սարկը ուսին, որի մէջ կային հապուստը եւ զրեերը, բոլորովին հասարակ ուսանողի մի նման, որ կթափառէ ուսումնարանից ուսումնարան կամ վարպետ պառօղ արուեստաւորի մի նման: Նա շրջեց այս կերպով թէյնի ափերը, Կոտալիա, Զվիցէրիա, Գերմանիա եւ վերջապէս Հօլանդիա: Այս ճանապարհորդութիւնը աննպատակ չէր: Գուտտէնքէրգը աչքի առաջ ունէր ոչ թէ իւր քմապաշտութիւնը, այլ որոշ մի նպատակ, որը կկրէր նա իւր հետ միշտ եւ ամեն ուրեք: Նորա կամքը ուղղված էր մի կէտի, եւ նախուղուշակ ձայնը ասում էր նորան, որ շուտ կամ ուշ նա պիտի համեմէ իւր նպատակին: Այս ուխտի ծայնը, որ չէր թողնում նորան ոչ մի բռնէ, այս նպատակը, որին նա աշխատում էր եւ ճգնում էր հասնել—էր դանել Աստուծու խօսքը տարածելու մի մնար Աստուածաշնչի միջոցով, աւելի շատ եւ շատ քան թէ տարածել էին մորդիկ առաջ: Ուրեմն Աստուածապաշտութիւնը եւ նախանձախնդրութիւնն Աստուծու համար շարժում էին երիտասարդ Գուտտէնքէրգին, որը ոնար էր պատում աշխարհի մէջ մրայն մի սերմ ճգելու, բայց հազարաւորների համար զտաւ: Տպագրութիւնը պէտքէ պարծենայ նորանով, որ իւր սկզբնաւորութիւնը նուիրված է աստուածպաշտական շարժառիթին եւ ոչ թէ առեւտրականին: Կրօնական շերմեռանդութիւնը միայն արժանի էր որ ամենայն ճշմարտութեան դործիք զտնէր: Զգիտենք բնչափսի հնարներով էր մտածում Գուտտէնքէրգը իւր միաբը իրադորել: Բայց մի դէպքը ստիպւ նորան մոռանալ բոլորը, ինչ որ նա առաջ մտածել էր մի բռնկում մօտեղքուց նորան իւր ցանկացած զիւտին: Մի անդամ Հօլանդիայի Հարլէմ քաղաքում եկեղեցու զգեստապահ Լավիքնատիս Կոստէրը Գուտտէնքէրգի քարեկամը ցոյց տուեց նորան լատիներէն քերականութիւն հոգեւոր զպրոցի աշակերտների համար փորագրված տախտակի վերայ: Տպագրութեան այս առաջին փորձն եւս սոյն այս ճրի առաջորդի—դէպքի—շնորհով եղած է:

## Գ.

Երիտասարդ եւ աղքատ Լավիքնատիսը Հարլէմ քաղաքի եկեղեցու զգեստապահը զուրս զարով զարնանը տօն օրերին քաղաքի միւս կողմը զբանելու եւ մտածելու

կնասեր ջրանցքի ափին ուղիների տակ: Նորա սիրոը լի էր սէրով դէպի իւր հարսը եւ նորա պատկերը երթէք չէր նեռ անում նորա երեւակայութենից: Ուրիշ սիրահարվածների նման նա կզուարճանար նորանով, որ կկտրէր դանակրվ իւր համար թանկաղին անունի առաջին տառը կից այն տառի հետ, որով կսկսվէր իւր աեռւնը: Բայց փոխանակ այս տառերը փորազբելու ժառի կեղեւի վերայ որ ժառի հետ մեծանան եւ մնան, նա կկտրէր ուսի փայտը, կհանէր կեղեւը եւ նորա վերայ կփորագրէր իւր սիրելի տառերը եւ յետոյ կրերէր այն փայտը իւր հարսին:

Մի անգամ երբ նորա աշխատութիւնը այս կերպով յաջողեց նորան, նա փաթաթեց ուսենի նիւղը իւր թանկագին տառերով մաղաղաթի կտորով եւ այս կերպով քերեց Հարլէմ: Միւս օրը կամենալով գուարճանալ իւր ծեռագործով, բացեց մաղաղաթը, եւ բնչպէս զարմացաւ երբ տեսաւ որ մաղաղաթի վերայ կերեւին նոյնպիսի տառեր, միմիայն հակառակ դիրքով եւ մութ - շէկ դոյնով: Ուռած տառերը, որոնք փորազրված էին ուսենու թաց ճիւղի վերայ, դիշերը իւրեանցից հիւթ դուրս հանելով տպիլ էին մաղաղաթի վերայ իւրեանց ձեւը: Կօստերի համար սա դիւտ էր: Նու վերցրեց տախտակը, փորազրեց նորա վերայ նոր տառեր, բսեց նոցա սեւ հեղանիւթ եւ այս կերպով սասացաւ առաջին տպադրված տախտակ: Բայց այս տախտակով կարելի էր տպել միայն մէկ երես, նորա տառերը չէին կարող շարժվել ուստի չէր կարելի փոփոխել, ամեն բառի տառերը տպելու համար: Խեղճ զգեստապահ կօստերի եղանակը կծածկէր բոլոր երկրիս երեսը փորազրված տախտակներով, բայց եւ այնպէս այս բոլոր տախտակները այժմեան մի արկդ տառերի տեղ չէին կարող բռնել: Վյուու ամենայնիւ տպազրութեան ոկիզը դրված է Հարլէմի զգեստատան մէջ - եւ կարելի կլինէր երկմտել արդենք թէ հրին աէտրէր նուրիրել այս գիւտի փառքը, — Գուտտէնբէրդիզին թէ կօստերին, եթէ որ այն հանդամանը ըլինէր, որ կօստերի գիւտը մէրի եւ հասարակ պատահման արդասիք էր, մինչդեռ Գուտտէնբէրդի զիւտը բազմահամբեր հետազոտութիւնների եւ հանճարի արդասիք էր:

## Ե.

Սակայն այս կողիտ փորազրված տախտակը տեսնելով, Գուտտէնբէրդի միտքը լուսաւորվեցաւ: Նա զննումէ տախտակը՝ զատում է նորան, մտաւորապէս մասսերի է կոտորում, զասումէ, բաժանումէ, փոփոխումէ, լրացնումէ, բսումէ թանաքը եւ ոլորակով սեղմումէ: Զգեստապահը զարմացած նորա երկար լսութեան վերայ ներկայ է զոնվում անզիտակցաբար աշխարհում մեծ զաղափարի ծննդին, որը իւր հիւրը 40 տարի կրումէր իւր զիսի մէջ: Կօստերի մօտից զնարովի Գուտտէնբէրդը տարաւ իւր հետ մի ամբողջ նոր արհեստ:

## Զ.

Միւս օրը, մի դանձ դտած մարդի պէս, որ չէ կարողանում հանդատանալ ոչ ցերեկ ոչ դիշեր մինչեւ որ չէ պահում նորան մի ապահով տեղ, Գուտտէնբէրդը թողնումէ Հարլէմ, զնումէ արագութեամբ դէպի վեր Պէնի ափով, զալիս է Սարաս-

բուրդ, փակվումէ իւր արուեստանոցի մէջ, յատուկ իւր ծեռով շնուրմէ հարկաւոր գործիքները, փորձումէ մին միւս, կոտորումէ, սկսած ծգումէ, նորէն սկսումէ, նորէն ծգումէ, նորէն սկսումէ իւր փորձերը, եւ վերջապէս հասնումէ այն կէտին, որ ժաղաղաթի վերայ յաջողութեամբ տպագրվումն այրութնի բոլոր 24 տառերը: Այս առաջին տպագած այրութն էր, որ Թէզէտ կոպիտ կոշտ էր, բայց ունէր մնձ նշանակութիւն: Սորա այն սկզբնական 24 տառերն էին, որոնք բաղմանալով ծածկեցին վերջապէս բոլոր երկրիս երեսը և որի մէջ մարմնացաւ մի նոր աննիւթական տարրը — միաբ: Գուտատէնբէրդը իւր խնդիրը այս Թէ այն կերպով լուծելու շատ փորձերից յետոյ, վերջապէս կանգնեց նորա վերայ, որ փայտից կոտորեց փոքրիկ խորանարդներ եւ նոցա իւրաքանչիւրի վերայ փորագրեց մի մի տառ, յետոյ ծակեց կողքերից այն փայտերը եւ շարեց Թելի վերայ համարիչի նման: Այս անգամին փորձի կատարելապէս յաջողվեցաւ:

## Է.

Նորան տիրեց յառաջաղինութեան յափշտակումն, նա հազիւ կարօղացաւ քնել հետեւեալ զիշերը: Այս խոռվեալ եւ Թերի բնի մէջ նորան տեսիլ ներկայացաւ, որը յետոյ նա պատմումէր իւր բարեկամներին: Այս տեսիլի մէջ այնքան շատ է մարգարէութիւն եւ այնքան մօտ է ճշմարտութեանը, որ կարդալով, տարակուսումնս Թէ այն արդեօք մի նախատեսութիւն չէր աւելի քան Թէ քնած աշխատաւորի մի տեսդային ցնորք: Ահա այս տեսիլի եղելութիւնը այնպէս, ինչպէս որ նա դրված եւ պահված է թէկի մատենադարանում:

\* Արքօհաստի վանքի մի խուցի մէջ նստած էր սեղանի մօտ, գլուխը յենլով ծեռների վերայ մի մարդ գունաթափ երեսով, երկայն մօրուքով եւ անշարժ հայեացքով: Այս մարդի անունն էր Ցովհան Գուտատէնբէրդ: Երբեմն նա զլուխը վեր էր բարձրացնում եւ նորա աչքերը փայլում էին մի ներքին լոյսով: Այս վայրկեաններին Ցովհանը արագ եւ ուրախ շփումէր ծեռով մօրուքը: Սա նշանակումէր, որ Ցովհանի աշքի առաջ երեւումէր այդ ժամանակ այն խնդրի լուծումը, որի վերայ չարչարգումէր նա: Ցանկարծ Գուտատէնբէրդը կանգնումէ, նորա կուրծից դուրս է Թոչում մի ծայն որ կարծես Թէ Թեմեւացնումէ նորան երկար մնչող մտածմունքից: Ցովհանը վագումէ դէպի պահարան, հանումէ այնտեղից մի սուր գործիք եւ արագութեամբ սկսումէ կտրել մէկ փոքր փայտի կտոր: Նորա բոլոր շարժմունքի մէջ երեւումէր Թէ ուրախութիւն եւ Թէ շփոթութիւն, կարծես Թէ նա վախենումէ, որ նորա դաղաքարը, այն գտած աղամանդը, որ նա կամենումէր կոկել եւ շինել յետազայ սերունդների համար, չփախչէր նորա ծեռից: Ցովհանը մնձ ջանասիրութեամբ հարթումէր գանակով փայտը, նորա ճակատը ծածկվեցաւ քրտինքով, իսկ աչքերը աղահարար դիտումէին աշխատութիւն: Երկար նա այսպէս աշխատեց, բայց այն ժամերը անցան նորա համար աննկատելի կերպով: Վերջապէս նա փայտը Թաթախումէ մի սեւ հեղանիւթի մէջ, դնումէ նորան մազաղաթի վերայ եւ բոլոր իւր մարմնի ոյժով սեղմելով այն ծեռը, որով բոնած ունէր նա փայտը, իւր այս ծեռից մի տեսակ մամուկ շինեց: Փորագրված տառերը տպգումն մազաղաթի վերայ: Նա տեսնումէ իւր զիւտը եւ հանճարի հրանուանքով լցված նոր աղաղակ դուրս է

Թուշում նորա թերանից : « Կա ծածկումէ աչքերը այնպիսի երջանիկ կերպով, որին կարօղ էին նախանձել դրախտի բնակիչներն անգամ եւ թուլացած վայր է ընկնում աթոռի վերայ : Եւ երբ սկսեց նորա բունը տանել, նա կիսաճայն կրկնումէր . « Ես ան մահ եմ » :

Այն ժամանակ նորան մի տեսիլ ներկայացաւ, որ խովումէր նորա հոդին :

« Ես լսեցի երկու ժայն, ասումէր նա, երկու անձանօթ եւ զանազան ժայներ, որոնք փոփոխարար խօսումէին ինձ հետ հոգուս խորեւամ : Այցանից մինը ինձ ասաց . « Ուրախացիր, Յովինան, դու անմահ ես : Այսուհետեւ ամենայն լուսաւորութիւն « պիտի ծաւալմի երկրիս վերայ քեզանով : Այն ազգերը, որոնք բնակումեն քեզա « նից հազարաւոր մլոններ հեռու, որոնք մեր երկրի զաղափարներից հեռու են, « կկարգան կը մը անեն այն մտքերը, որոնք առ այժմ լուռ են, քայլ որոնք կտարած « վին եւ կբազմանան ինչպէս արեւի անդրադարձումն ցօդի կաթիների մէջ, քո եւ « քո պիտափ շնորհով » :

« Ուրախացիր, Յովինան, դու անմահ ես, որովհետեւ դու այն թարգմանն ես, որին « սպասումէին ազգերը փոխադարձ խօսակցութեան համար միւսևանց հետ : Դու ան « մահ ես, որովհետեւ քո զիւաը պիտի տայ յաւիտենական կեանք շատ խելքերին, « որոնք առանց քեզ մեռած պիտի մնային, եւ այս բոլոր խելքերը իւրեանց հեր « թիւն պիտի անմահացնին նորան, ով իւրեանց անմահացրեց » :

« Այս ծայնը լոեց, Թողնելով ինձ յափշտակման մէջ : Բայց միւս ծայն արժակվեցաւ, որ ասաց ինձ . » Այս, Յովինան, դու անմահ ես, քայլ ինչ զնով : Արդեօք քեզ « նմանների մտքերը միշտ բաւական մաքուր եւ սուրբ կլինին, որ ալ մէք ունենան « մարդկային հեռաւոր սերունդին խելի եւ տեսանելի լինելու : Արդեօք շատ մարդ « կային մտքերը, նոցա միծաղոյն մասը հազար անգամ աւելի արժանի չէին որ ոչն « չանային քան թէ կրկնվէին եւ տարածվէին աշխարհու մէջ » :

« Մարդս լինումէ աւելի ապականված քան թէ իմաստուն եւ բարի, նա կաղծէ այն « ժիրքը, որը դու նորան յանձնուուես, նա ի չարն զործ կղնէ այն ընդունակութիւնը, « որ դու սաեղծումես նորա համար : Շատ զարեր քո յիշատակը անէծքով պիտի « կտարեն եւ ոչ օրհնութեամբ » :

« Կծնվին մարդիկ կարօղ եւ զրաւիչ խելքով, քայլ հազարտ եւ յանցաւոր սրտով « առանց քեզ այս մարդիկը ստուերի տակ կմնային, եւ փակված լինելով նեղ շըր « ջանի մէջ, նորա անբազութիւն կդառնային իւրեանց ժամանակի եւ իւրեանց « մերժաւորների համար : Խակ քեզանով նորա կկուրացնեն, կանբազդացնեն եւ կհրա « պուրեն զէպի յանցանքը բոլոր մարդիկներին եւ ամեն ժամանակներ » :

« Նայիր այս միմիօնաւոր հոդիներին, որոնք կորած են մի ապականված հոդուն « մերժենալուց : Նայիր այս պատանեակներին, որոնք մոլորված եւ ապականված « են այնպիսի զրբերով, որոնց ամեն մի երիսը խելքը թունաւորող թոյնով է թունաւորված » :

« Նայիր այս երիտասարդ աղջիկներին, որոնք կորցրած են ամենայն ամօթը, որոնք « ոչինչ չեն հաւատում, անզութ են եւ անոզորմ զէպի աղքատները այն զրբերի շնոր « հովի որոնք լի են սիրած թունաւորօղ թոյնով » :

« Նայիր մարդերին, որոնք ողբումեն իւրեանց գաւակներին » :

« Նայիր հայրերին, որոնք կարմրում են (ամաջումին) իւրեանց աղջիկների փոխարէն »:

« Յովհան, անմահութիւնը, որի համար պէտքէ վճարել այնքան աքասուք եւ « այնքան թշուառութիւններ, արդեօք չափազանց թանկ գնված ցի լինի: Մինչէ կպար « ծենաս փառքը այս գնով ծեռք բերերով: Արդեօք չէ սարսկցնում քեզ, Յովհան, « այն պատասխանառուութիւնը, որ վերցնումն ափառքի համար քո հոգու վերայ »:

« Հաւատա ինձ, Յովհան, ապրիր այնպէս որպէս Թէ չես արած ոչինչ դիւտ: Կա « յիր քո դիւտի վերայ ինչպէս մի հրապուրքչ, բայց լնասակար ցնորք, որի իրադոր « ծումն միայն այն ժամանակ օգուտ կլինէր, երբ մարդու բարի լինէր . . . բայց « մարդը չար է, իսկ չար մարդի ծեռն զէնք սալը չէ նշանակում արդեօք նորա չա « բարդութիւններին մասն ունենալ »:

« Այստեղ ես զարթեցայ վախիցած եւ տարակուսած: Մի բոպէի չափ տատան՝ վումէի, բայց յետոյ մոտածեցի, որ Աստուծու պարզեւները որչափ եւ վտանգաւոր են երեխն, վատ չեն լինում երբէք, եւ մարդի բանականութեանը եւ ազնիւ ծրդունքին եւ կամեցօղութեանը մի աւելորդ գործիք տալը կնշանակէ նոր, ընդարձակադոյն ասպարէզ բանակ անմահ հոգու եւ յաւիտենական նշմարտութեան առաջ: Ես եւս որոշեցի շարունակել աշխատել զիւտիս վերայ »:

## Ը.

Գուտտէնրէրդը, առաջին հայեացքից գնահատելով իւր զիւտի Թէ բարոյական եւ Թէ շահաւէտ նշանակութիւնը, շուտով զդաց որ այսպիսի մի գործի համար բառական չեն իւր Թոյլ ծեռները, իւր կարճ կիանքը եւ իւր համեստ կարօղութիւնը: Կորա համար անհրաժեշտ էին միեւնոյն ժամանակ երկու հակառակ բան. գտնել ընկերներ, որոնք օգնէին նորան իւր ծեռնարկութեան ծախսերի եւ աշխատութիւնների մէջ, եւ երկրորդ—անհրաժեշտ էր առ ժամանակ ծածկել այս ընկերներից իւրեանց այս աշխատութիւնների նշմարիտ նպատակը, որպէս զի մի գուցէ Թէ նորա հրատարակեն նորա դիւտը եւ ուրիշի ծեռն անցնելով, փառը եւ պատիւն եւս ուրիշը ստանայ: Կա դիմեց իւր ծանօթ բանի մի հարուստ աղնուականներին Ստրասբուրգի եւ Վայնցի մէջ, բայց երեւի ամենքը բացասացին, որովհետեւ այն ժամանակ ամենայն ժեռագործ արուեստը աղնուականի համար ստորին էր համարվում. աղնուականը ալուեստաւոր դառնալով, պիտի հրաժարվէր իւր հասարակութեան հետ ամենայն յարաբերութիւններից: Գուտտէնրէրդը վճռեց համարձակ բայլ անել. նա ինքն արուեստաւոր դարձաւ, արուեստաւորների ընկերութեան մէջ մտաւ, նա իւս նվիշաւ ժողովրդի մէջ նորա համար, որ այն ժողովուրդը բարձրացնէ ժամանակով քարծը մտաւոր եւ բարոյական աստիճանի:

Նոր եւ հիանալի ձարտարապետութիւններով միասին պարապելու տոիթ բոնոծ, օրինակ ժամանակութիւններ, ուսկերչութեամբ, բանդակաղործութեամբ եւ ականաղործութեամբ, Գուտտէնրէրդը դաշն կապեց երկու հարուստ ստրատուրցի արուեստաւոր վարպետների հետ. Աղդէան Դրիգչէնինի եւ Յովհան Բուժֆէի հետ, եւ յետոյ Ֆառուսափ հետ, որ Վայնցում ականաղործ եւ սեղանաւոր էր, որի անունը պատճառ եղաւ, որ ժողովրդական երեւակայութիւնը խառնեց նորան միսս Յատուստի հետ,

որ գերմանիայում երեւելի կախարդ էր, եւ զիտէր, ըստ աւաղնութեան, բնութեան բոլոր գաղանիքները եւ յարաքերութիւններ ունէր ովների հետ. ուստի եւ ապա դրութեան ժագումն ժողովուրդն երկար ժամանակ վերաբերում էր կախարդութեանը ։ Երջապէս գուտտէնթէրդը ընկերութիւն կազմեց Հէլմանի հետ, որը Ստրատուր գում առաջին թղթի գործարան հիմնողի եղբայրն էր:

( Աշտարակէնն ) :

Մ. Տ. Ա.

ԻՄ ՓԱՓԱԳ.

Մասհօղ Հայեր, բանական Հայեր,  
Պիտի գաղարէք լինել անտարբեր.  
Պիտի ցանկաք դուք աղջային պարծանք,  
Թէ ձեր կեանք անէք մաշօղ բամբասանք,  
Ըուրջ լուսացած է, դուք ի՞նչի կընէք.  
Ենօդ և անմիտ մնալ ունի՞ արժէք.  
Հայեր, միտք արէք, ի՞նչ է ձեր արած.  
Ո՞ւր է ջերմ սրտով ձեր պաշտած Աստուած,  
Ո՞ւր ձեր անկեղծ սէր առ Խջման սուրբ տեղ,  
Որ հայ աղգութեան է խարիսխ զօրել:  
Իսկ Ճշմարտութիւն, հայասիրութիւն  
Ե՞րբ պիտի առնեն ձեր մէջ յարութիւն  
Ազգին ծառայել Ե՞րբ կհամարիք  
Եւրաքանչիւրդ ձեր քաղցր պարտիք,  
Խեղճ եղբօրդ կլինի՞ք առատնուիրօղ  
Թէ պիտի պաշտէք անդազար ձեր փող,  
Թշուառ մի՛ կացէք, իմ սիրուն Հայեր,  
Խելք, ոգի առէք, դործեցէք գործեր:

ԻՆԱԱՆ ԲԱԴՐԱՑՈՒՆԻ:

ԱԶԴԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Արարատի վերջին տեսրակում խոստացածիս համաձայն, Վեհափառ Հայրապետի հրամանով, կհրատարակվի Խորէն Վարդապետ Ստեփանէի յայտարարութիւնը, որ այս է աչա.

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՄՈՒԹԵԱՆ

ԹԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ, ՍԲԲՈՆԱԿԱՏԱՐ ԿԱԹՈԼԻԿՈՍԻ  
ԱՄԵՆԱՅՑՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ԳԷՈՐԳԱՑ Գ. Ի.

Ամենախոնարհ յայտարարութիւն:

Վեհափառ սուրբ Հայրապետ,

Վեհափառութիւն Ձեր բարեհաճեցայք հրամայել, զի ես յաւուրս ամարային արձակուրդի Վէորդեան Ճեմարանի ճանապարհորդեցից ի Առ-